

**«ՈՂԻՍԱԿԱՆ» ՀԵՐՈՍԱՎԵՊԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՍՅՈՒԺՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Բ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայտնի է, որ Տրոյական պատերազմի ավարտին հաջորդում է պատերազմին մասնակցած այրերի վերադարձն իրենց օջախները: Ժամանակին այդ թեմայի շուրջ ստեղծվում են մի շարք պատումներ, որոնք համախմբվում են «Վերադարձներ» մեկ ընդհանուր խորագրի տակ: Ահա այդպիսի մի պատում է «Ողիսական» հերոսավեպը:

Սույն պատումի հերոս Ողիսեսը տունդարձի ճանապարհին կուրացնում է ծովերի աստված Պոսեյդոնի որդուն՝ կիկլոպ Պոլիթեմին: Հայրը հետապնդում է Ողիսեսին և տասը տարի շարունակ բազում դժվարություններով ու խոշոր դժոխքներով խանգարում նրա վերադարձը: «Բազմաշարժար և հնարամիտ» հերոսը հաղթահարում է այդ բոլորը և երկար դեգերումներից հետո վերադառնում հայրենի իթակե: Պատումը հարուստ է հրաշալի ու հեքիաթային մոտիվներով, որոնք ուշագրավ աղբյուրներ ունեն հայկական նմանատիպ սյուժեների հետ:

Նյութերը, որոնք համադրվելու են «Ողիսականում» առկա մոտիվային համակարգին, գրի ենք առել 1982—1987 թթ. Սևանի ավազանում՝ բանահավաքչության ընթացքում: Դրանք ոչ ընդարձակ հեքիաթներ են, ինչպես նաև հատվածներ ու պատառիկներ:

Դրառված նյութը 6 միավոր է՝ բացառիկ տարածված թափառիկ սյուժեներով, որոնց զուգահեռները տարբեր ժամանակներում գրավել և հրատարակվել են «Հայ ժողովրդական հեքիաթներ» համահավաք, բազմահատոր ժողովածուներում¹: Հեքիաթային այդ սյուժեները գտնում ենք նաև միջազգային ուղեցույցներում²:

Հունական հերոսավեպի և հայկական հեքիաթների որոշ սյուժեների տիպաբանական աղբյուրները հնդեվրոպական, փոքրասիական մշակութային փոխառնչության արդյունք հանդիսանալով, լույս են սփռում թափառիկ սյուժեների փոխանցման խնդրին: Ստորև բերվում են հունական հերոսավեպի հետ ընդհանուր եզրեր ունեցող սյուժեները:

1. Վերադարձ հայրենի օջախ.

Հունական հերոսավեպում՝ պատերազմից վերադարձող հերոս:

Հայկական հեքիաթներում՝ օտարություն գնացած հերոսի վերադարձ: Ի դեպ, տունդարձի երկու ճանապարհներն էլ անցնում են նմանատիպ փորձությունների բովով:

2. Հանդիպում միաշֆանի հրեշի հետ և հրա կուրացումը.

Հունական պատումում՝ կիկլոպ Պոլիթեմ:

Հայկականում՝ Թափագյուղ, քյալլագյուղ:

Այս սյուժեով գրավեց և ամբողջական հեքիաթ, և թե համանման սլատում վերադարձի ճանապարհի արկածների շղթայում:

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 1, Երևան, 1959, էջ 317, հ. 2, Երևան, 1959, էջ 117, հ. 3, Երևան, 1962, էջ 360, հ. 4, Երևան, 1963, էջ 87, հ. 5, Երևան, 1967, էջ 325, հ. 8, Երևան, 1977 և այլն:

² Н. П. Андреев, Указатель сказочных сюжетов по системе А. Арне, Петербург, 1929. Anth the types of the Folkate. A classification and Bibliography Antti Arnes, Helsinki, 1961, № 953, 1137.

3. Հուրի փերիների սյուժեն.

Հունական հերոսավեպում՝ սիրենաները:

Հայկականում՝ «Հուրի փերիներ» կամ «Հուրի մալաք ախչիկներ»:

Այս սյուժեն հիշատակվում է նաև երկրորդ խմբի հեքիաթների շարքում: Նրկու դեպքում էլ հրանք կախարդ հուշկապարիկներ են, որոնք երգով համալնով կանխարգելում են հերոսի վերադարձը:

Վերոհիշյալ սյուժեներով Գեղարքունիքի բանավոր արձակում գրաված նյութերը հետևյալ քանակական պատկերն ունեն. առաջին խումբը կազմում է երեք ոչ ընդարձակ հեքիաթ, երկրորդը՝ երեք տարբերակ. երրորդ սյուժեով մի քանի հատվածներ և մեկ հեքիաթ:

Ինչպես դժվար չէ նկատել, հենց միայն թվարկումից ականառու է հիշատակված սյուժեների ընդհանրությունը «Ողիսականի» համապատասխան մոտիվների հետ:

Մեր նպատակն է այդ սյուժեների համադրման ճանապարհով բացահայտել այն ընդհանուր, որն առկա է երկու ժողովուրդների դիցաբանական և հրաշապատում պատկերացումներում:

Կանխավ հարկ է նշել, որ հերոսավեպի և քննվող հեքիաթների սյուժեների նմանությունը սկսվում է նաև ձևական կառուցվածքային ընդհանրությունից. այն է՝ հերոսներն իրենք են պատմում պատահած փորձությունների ու վերադարձի դժվարությունների մասին. ըստ որում, պատմում են ունկնդիրների հոծ բազմության առաջ: Այսպես, Ողիսեսը, պատասխանելով ֆեակաների Ալկինոս թագավորի այն հարցին՝ թե ով է ինքը, ասում է.

Ում որ գիտեք և լսել եք բոլորից շատ տառապանքներ կյանքում կրած, Կարող եմ ձեզ էլ առավել բաղմաբազում ժանտ աղետներ

Պատմել, որոնք կամավ աստվածների միշտ կրել եմ ես շարատանջ³:

Հեքիաթի մեր հերոսը ևս, ունկնդիրներին հաղորդելով իր հետ պատահած փորձությունները, Աստծո կամքի թելադրանքն է համարում այդ ամենը և օտարություն գնացողներին փորձում է համոզել հետ կանգնել այդ մտքից քանդի՝ «...էն, ինչ ես տեսա իմ դուշման թրխ շտենա. լսեք պատմեմ իմ զլխու էկած, իմ սև հընչի ա սիվտկե, էս էր դրած իմ ճայտին, թախտից փախա, իմ քոռ բախտից դոր փախենեմ»⁴: Աստծո և ճակատագրի առաջ անզոր են զգում իրենց թե՛ պատերազմի հերոս Ողիսեսը՝

Հնարավոր չէ խուսափել այն ամենից,

Ինչ որ վերուստ սահմանված է աստվածների հզոր կամքով...⁵

և թե հայկական հեքիաթի հերոսը՝ «...Աստու գրած ա ջնջել չըլնի»:

Երկու հերոսներն էլ բաց ծով են դուրս դալիս ինքնաշեն լաստանավով, սակայն ծովում բարձրացած ուժգին քամին ու փոթորիկը՝

...թույլ չավին առաջ գնալ,

Մորիկն հանկարծ լաստանավն իմ ջախջախելով ցրիվ տվեց⁶:

Գրեթե նույն վիճակում է հայտնվում հայ հերոսը՝ «...ծովն ընձի վերցուց տարավ, իրեք օր տարավ, եդո թալեց ծովու կրաղ...»⁷:

³ Հ ո մ եր ո ս, Ողիսական (այսուհետև՝ ՀՈ), Սարգս. Հ. Հ ա մ բ ա Ր ձ ու մ յ ա ն ի, Երևան, 1958, էջ 105:

⁴ Հնագիտության և աղագրության ինստիտուտ, Հայ ժողովրդական բանահյուսության արխիվ, Ի. Գրիգորյանի անձնական հավաքածո (այսուհետև՝ ԳԱՀ):

⁵ ՀՈ, էջ 68:

⁶ Նույն տեղում, էջ 107:

⁷ ԳԱՀ:

Ողիսևաի դեգերումները շարունակվում են Կալիփսո հավերժահարսի մոտ 8-ամյա գերութունից հետո էլ, գրեթե նույն կերպ, ինչպես հայ հեթանոսի հերոսը, «հուրի մալաք» աղջիկներից մազապուրծ փախչելով ծով է դուրս գալիս ինքնաշեն լաստով: Ահա թե ինչ է պատմում նա. «...մացի էդ ախճկա կուշտ, յոթ-ութ տարի արրանք: Օրերից մի օր գացի ծովու կրաղ, նստա լողկեն, դու մ'ասա շրիդ փղուկ էր, նստելու բաշտան շրիդ կղրավ, ծովն տախտակն քյաշեց տարավ: Մըջ ծովուն ես մենակ մացի. ծովն ընձի վերցուց տարավ. տարավ ու տարավ»⁸:

Նման պարագաներում հերոսները ընկնում են հոգեկան բարդ կացության մեջ, և հայրենի տան ու օջախի կարոտը, հայրենաբաղձության բուռն զգացումը հանգիստ չեն տալիս նրանց: Մորմոքում է Ողիսևաի սիրտը՝

Ես չգիտեմ մի այլ երկիր ավելի լավ և վեհագույն քան սիրելի իմ Իթակեն:
Եվ ոչ մի բան սրտին այնքան հաճելի չէ, որքան երկիրը հայրենի
Ու ծնողներն, եթե նույնիսկ օտար երկրում մարդ ապրում է

պերճապաճույճ ապարանքում...⁹

Տառապանքի ճամփաներում նույն հոգեվիճակն է ապրում նաև մեր հերոսը՝ «...ախ յարաբ մեկ էլ կտենամ իմ օջախի ծուխ, իմ երդրի քաղցրութեն, իմ ընտանիք, իմ տուն ու տեղ. թե՛ էս էր իմ բաժին աշխար, էս էր իմ բախտ...»¹⁰:

Տիպաբանական, սյուժետային ընդհանրության և նմանության բացառիկ հետաքրքիր եզրեր է բացում հեթանոսների այն խումբը, որտեղ պատմվում է միաշքանի հրեշի հանդիպման մասին: Կիկլոպ Պոլիթեմ և Թափագյուզ-քյալլագյուզ սյուժեի երկկողմյա համադրումը երևան է բերում այն նմանությունը, որ առկա է առասպելական այս կերպարների ընդհանուր նկարագրում:

Հայկական հեթանոսներում հանդիպում ենք Թափագյուզին պատժելու տարբեր վարկածներին¹¹. մի հեթանոսում թագավորի աղջիկն է կուրացնում նրան, մի այլ դեպքում նա պատժվում է ճանապարհորդ որսորդի, երրորդ դեպքում՝ օտարութունից վերադարձող «քաջ» գյուղացու ձեռքով:

Ընդհանրականը գրեթե բոլոր տարբերակներում միաշքանի հրեշի արտաքին նկարագիրն է. իր գերմարդկային ուժով ու ահարկու ձայնով, ինչպես նաև զբաղմունքով՝ խաշնարած և որսորդ: «...մեկ էլ մի դղրոց հընգավ,— ասվում է հեթանոսներից մեկում,— տեսանք էկավ, մի եքյա ջանավար, օշխրի սուրուն հառեջն էրած, էկավ մտավ հուր զաղեն (քարայր), ջաղցի ջոջ քարն էլ թալեց վըր դրուան, ձեռին էլ մի եքյա շինար էր քյոքյախան էրած, թալեք էր վըր թևուն:

Բերեց էդ զաղի մեջ ջարդեց, դառցավ կրակ թեժցուց, ծառը կրակին տվեց: Իսանի նման չէր. մեջտեղն էլ մե թաքյ խատ հաշկ էր, մե եքյա հաշկ:

Շուտ էկավ նայեց, մեզնից մեկին վերցուց տիփեց դետին. տեղնուտեղ մեռցուց, թալեց կրակին ու մե դըռքով կերավ...»¹²:

Տիպաբանորեն նույն մոտիվը իր ամբողջության մեջ ոչ միայն համապատասխան է հունական պատումին, այլ երբեմն թվում է նրա կրկնությունը.

Մինչև որ նա իր ոշխարով վերադարձավ
Ծառ շալակած, որ դրանով կրակ վառի,
Այդ բոլորից հետո մի մեծ ժայռ գլորեց մուտքի առաջ,
Հարձակվեց ու պարզելով իր ձեռքերը ընկերներին,
Երկու հոգու խեց հանկարծ ու շան նման խփեց դետին,
Հետո նրանց բզկտելով ագահորեն նստեց լափեց¹³:

⁸ ԳԱՀ.

⁹ ՀՈ, էջ 129.

¹⁰ ԳԱՀ.

¹¹ Տե՛ս Հայ ժողովրդական հեթանոսներ, հ. 1—5, 8.

¹² Ռ. Գրիգորյան, Գեղարքունիք (այսուհետև՝ ԳԳ), Երևան, 1983, էջ 128—132.

¹³ ՀՈ, էջ 124.

Այնուհետև դեպքերի զարգացումը դարձյալ նման է թե՛ հունական և թե՛ հայկական պատումներում. Պոլիթեմին կուրացնում են, և երկու հերոսներն էլ, թաքնվելով նրա ամենասիրելի խոյի մորթու տակ, դուրս են գալիս քաղաքից, գնում դեպի ծով և ափից բղավում են.

Կիկլոս, եթե մահկանացու մի մարդ, մի օր հարցմունք անի,
Թե ով այդպես աչքից զրկեց, կուրացրեց քեզ խայտառակ...
Պատասխանիր, որ այդ արեց, աչքդ հանեց քաղաքավեր Ողիսն
հերոս¹⁴,

Ահա ինչ է ավանդում հայկական հեքիաթը.

«Արևն առավ մտնել. Քյալլագյոզն էկավ, էն հնգերոջս խորովեց, կերավ, քյնավ: Մտածեցի հընեմ Թամոյ մորթեմ (օշխրի մերին ա), շիշ դադի, խթի Թափագյոզի հաշկ քողցուցի. մերին մորթի տիկ խանի, խաքյա. լուս բացվավ, դռան մեջ կայնավ, ես Թամոյ տեղ հընցա. փախա գյոռացի. քյոռ քյալլագյոզ, քյո Թամոյ ես մորթի, քյո հաշկ ես խանի, հելա դազից դուս»¹⁵:
Հունական հերոսավեպի նման հայկական պատումներում ևս կիկլոպին կուրացնելուց հետո հերոսները փախչում են դեպի ծով. «Թափագյոզ կբռնե ծով դրող կայնուկ, ինչ եքյա քարեր, ժեռ պալեր ասես օր չպոկեց ու չթալեց մեր հետևանց. թե իմալ պրծանք, էտի միան կապուտ կապավորին ա հայզնի, էդ թռավ երկինք, հիջավ գետին, պլըթաց...»¹⁶:

Ինչ է պատմում Ողիսեսը.

Այդ ասացի և ավելի խիստ կատաղեց նրա հոգին,
Վազեց եկավ և պոկելով բարձր լեռան գագաթը մեծ,
Շարտեց մեր արագընթաց նավի վրա...¹⁷:

Նշված սյուժեներից զատ, մեր գրառած հեքիաթներում կան նաև հունական հերոսավեպի այլևայլ մոտիվներ. մասնակի միջադեպեր, որոնք, օրգանապես սերտ կապված չլինելով միմյանց, ծավալվում են բուն սյուժեի առանցքի շուրջը: Հերոսների թափառումների ճանապարհը անցնում է «մահվան աշխարհում»: Ողիսեսը, հանձնվելով ծովին, հասնում է մեռյալների աշխարհ, զոհ մատուցելով մեռածներին, աղոթում է նրանց հոգիների համար.

Հայնժամ եկան հավաքվեցին հոգիները մեռյալների...¹⁸:

Ջրուցելով բոլորի հետ մեկ առ մեկ՝ Ողիսեսը մոտիկից տեսնում է «մեռյալների աշխարհը».

...Հավաքվեցին մեռյալները բյուրաբազում,
Աղմկեցին ահագնակի.
Եվ ինձ պատեց ահ ու սարսափը...¹⁹:

Հայ հերոսը ևս ծովում լաստանավի խորտակումից հետո, երբ ալիքները հերոսին ափ են նետում, ընկնում է անդրաշխարհ. «...գացի հելա մե գեղ, աշխատա էդ դեղի մեջ, ապրա, էդ գեղի աղաթն էն ա. օր կնիկ մահանա՝ մարդն խեղ կհիճուն. մնաց իմ կնիկ մեռավ, էհ օրենք ա՝ բերեցին ինձ էլ կնգաս խեղ թաղին, իմ պաշարն իմ խեղ գոռալեն հիճավ գետնի տակ»²⁰:

14 Նույն տեղում, էջ 120:

15 ԳԳ, էջ 131:

16 Նույն տեղում:

17 ՀՈ, էջ 130:

18 Նույն տեղում, էջ 180:

19 Նույն տեղում, էջ 163:

20 ԳԳ, էջ 128, 129, նաև ԳԱՀ (Սևան, Մարտունի հավաքածո):

Հայտնի է, որ հին հույների պատկերացումներում ես իր տեղն ունենալը և Անդրաշխարհը՝ մեռյալների աշխարհը²¹, որ հաճախ է հիշատակվում հոմերոսյան պոեմներում: Հանգուցյալի պատվին տրվող զոհողություններից զատ, նաև հատուկ պատրաստությամբ էին դին հանձնում հողին:

Ու շուրջ բոլորը շարեց մորթած միսը մեծ-մեծ կտորներով
 Եվ գետեղեց դիակի շուրջ յուղ ու մեղրի շատ սրվականներ²²:

Հեթիաթում նկարագրվող այդ միջադեպը, հեթանոսաշունչ հին հավատքի վերապրուկ լինելով, պահպանված է գրեթե բոլոր պատումներում՝ մասնակի շեղումներով: Ընդհանուրը հերոսավեպի մոտիվային նկարագրին այդ զույգ հերոսների տունդարձի ճանապարհին նմանատիպ արկածների առկայությունն է:

Սյուժետային նմանատիպ դրվագների համադրումից զատ, առանձնակի ուշադրության են արժանի կառուցվածքային մի շարք առանձնահատկություններ: Հեթիաթների «Թափագյուղ» շարքը առանձնանում է իր կառուցվածքով՝ նկատելիորեն շեղվում է ժանրին հատուկ ավանդական կառուցվածքից: Հայտնի է, որ հեթիաթի ժանրն ունի իր կառուցվածքային կայուն պատկերը. յուրաքանչյուր բանասաց իբրև կարգ իր հեթիաթը սկսում է «սկիզբ» բանաձևով՝ ժամանակի և տարածության ենթագիտակցական մի ձևակերպմամբ. որն ընդհանրական է գրեթե բոլոր հեթիաթների համար՝ «կեղնի, չէղնի», «ժուկով ժամանակով», «ավալ ժամանակով», «հէլել ա, չի հէլել»: Մեր գրառված և քննարկվող հեթիաթները, ոչ միայն շունեն նմանատիպ սկիզբ, այլև սկսվում են էպիկական շնչով ու հանդիսավորությամբ, թվում է, թե ևրկսոսություն է հեթիաթի հերոսի և ունկնդիրների միջև, այսպես.

...Հեյ ջաղամաթ (ժողովուրդ—Ռ. Գ.) դուք լսեք, թե ինչ ա էկե իմ
 խեղճ գլուխ, թե հընչի ա իմ սև սիվտկե²³:

Կամ՝

Ախպեր Թումո դու ականջ դիր, թե ինչ էկավ վրո իմ արևուն,
 դու լսի իմ դարգ²⁴:

Գրեթե նույն ոճով ու հանդիսավորությամբ է ներկայացնում ֆեակաների երկրում «ժուլատանջ ուժասպառ» Ողիսեսը իր արկածները՝ կիկլոսականր, կիրկեականր և մյուսները: Հանգամանք, որը դարձյալ հունական հերոսավեպի և հայկական պատումների տիպաբանական ընդհանրության ապացույցներից կարելի է համարել:

Ինչու է հատկապես «Ողիսականն» իր սյուժեններով այդպես տարածվել ու պատմվելով պատմականորեն և աշխարհագրորեն մեծ տարածություն անցնելով հասել մինչև մեր օրերը, տարածվել Հնդկաստան ու Պարսկաստան, Թուրքիա, ընդգրկել ողջ Բալկանյան ու փոքրասիական թերակղզիները²⁵:

Մինչ «Ողիսականը» կենթարկվել պիղիստրատյան խմբագրման, ժողովրդի մեջ դեռևս Տրոյական պատերազմի ընթացքում ակտիվ կենցաղավարմամբ պատմվում էին պատերազմի հերոսների սխրագործությունները պատկերող բազմաթիվ վիպական երգեր ու զրույցներ: Այդ մասին պատմական հիշողություն կա պահպանված «Ողիսականում»: Այսպես, ֆեակաների երկրում՝ Ալկինոս թագավորի հյուրասիրության սեղանի շուրջ պալատական երգիչ Դե-

²¹ Հոմերոս, Իլիական, թարգմ. Հ. Համարձումյանի, Երևան, 1987, էջ 423:

²² Նույն տեղում, երգ 23:

²³ ԳԳ, 128, ԳԱՀ, Վարդենիսի և Մարտունու շրջանի բանահյուսական հավաքածուներ, 1984, 1986, ձեռն.

²⁴ ԳԱՀ, Սևանի շրջանի բանահյուսական հավաքածու, 1983, ձեռն.

²⁵ Н. П. Андреев, նշվ. աշխ.

մոգովը երգով պատմում և գովաբանում էր Ողիսևսի սխրագործությունները՝ և հա թե ինչ է ասում Հոմերոսն այդ մասին.

Հուշակավոր երգիչն երգում էր, իսկ խորիմաստ Ողիսևսը
Հուշվում էր և արցունքները թափվում էին այտերն ի վայր...²⁶:

Տրոյական պատերազմին նվիրված վիպական երգերը բանավոր ավանդական զրույցների ձևով պատմվել ու փոխանցվել են սերնդեսերունդ, տարածվել երկրի սահմաններից դուրս՝ ընդգրկելով նորանոր տարածաշրջաններ։ Բանավոր ավանդման այս գործընթացը բնական և համոզիչ համարելով՝ ակադ. Մ. Աբեղյանը ավելացնում է. «...հաճախ ամբողջ ժողովրդական երգեր, վիպական մեծ քերթվածներ, որոնք երբեք գրված չեն եղել, մի ազգից մյուսին, մի լեզվից մյուսին են անցնում ասացողների բերանին գրեթե բառացի ոտանավորով թարգմանվելովուստի անբնական չէ, որ հայերի մեջ պատմվեր մի այդպիսի զրույց, որ Պոլիթեմի հետ ընդհանուր նմանություն ունենար...»²⁷:

Դասական Հելլադայում հոմերոսյան վիպերգություններ երգող ռապսոդ, անդ, հոմերիդ երգիչները, ըստ Հոմերոսի համապատասխան վկայության, շրջել են ոչ միայն իրենց երկրում, այլև նրա սահմաններից դուրս.

Հայտնի է, որ փայլուն երգչին միշտ լսում ենք հաճույքով,
նման մարդկանց երկրե երկիր պալատներն են հրավիրում²⁸:

Երգիչ-կատարողը բոլոր հրավերների ցանկալի հյուրն է եղել և մեծ հեղինակություն է վայելել։ Մարդիկ միշտ «փափագում են ականջ դնել այն երգչին», որը պատմում է թարմ ու նորագ դեպքի մասին»²⁹:

Թեպետ հոմերոսյան հերոսապատումը ստեղծվել է պատմական որոշակի իրադարձությունների՝ Տրոյական պատերազմի ընթացքում, նրա անմիջական ազդեցության տակ, սակայն կրել է ընդհանուր վիպական սյուժեներ ու մոտիվներ, որոնք դյուրությամբ փոխակերպվել են ժողովրդական տարբեր ավանդությունների։ Մյուս կողմից, միջնադարում հաճախ ենք հանդիպում հոմերոսյան վիպերգերի սյուժեների, որոնք երգվել են ու պատմվել հայկական միջավայրում, ուր հոմերոսյան դյուցազներգությունները երգել են երգիչ-կատարողները՝ ձեռքից ձեռք փոխանցելով անմահություն և վիպական արվեստի կատարելություն խորհրդանշող սարդենի (դափնե) մահակը³⁰։ Այս իմաստով բացառիկ արժեքավոր տվյալներ կան պահպանված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում, ուր որոշակիորեն դրսևորված է մեծ Պատմահոր համակրանքը հունական մշակույթի, գրականության և առասպելական զրույցների նկատմամբ, որոնք «պերճ և ողորկ» են և «զճշմարտութիւն իրացն ալլաբանաբար յինքեանս ունին թագուցեալ»³¹։ Այդ զրույցներից հավաստին ու առաջնայինը Խորենացին համարում է Հոմերոսի պատմածները Տրոյական պատերազմի մասին, որին «...և մեր Զարմայր 'ի ծառայութեան ասորեստանեայց սակաւութ ընդ եթովպիացի զօրուն օգնական Պոլիմուս Եւ անդ 'ի քաջացն հելլենացոց վիբաւորեալ մեռանի. ալլ կամիմ յԱբիլեայ, և մի՛ յայլ ումեքէ 'ի քաջացն»³²։ Այդ բոլորը մի կողմից վկայում են գրական

²⁶ ՀՈ, էջ 112—113:

²⁷ Մ. Աբեղյան, Հայոց հին դրականության պատմություն (Հայ վիպական բանահյուսություն), հ. 1, Երևան 1966, էջ 107:

²⁸ Հոմերոս, Ողիսական, թարգմ. Ս. Գրքաշարյանի, Երևան, 1957, տող 382:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 130; տե՛ս նաև Մովսես Թերզոյ, Նույն տեղում, էջ 161, Ստեփանոս Սյունեցի, էջ 200 և մյուս մեկնիչները:

³¹ Մովսէսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 91:

³² Նույն տեղում, էջ 89:

և բանահյուսական փոխադրեցություն հանգամանքը և ապա՝ նաև հնդեվրոպական բանավոր ավանդությունից սերող ընդհանուր սյուժեների, մոտիվների փոխանցման՝ երկրե երկիր անցման մասին, որի համար հայկական միջավայրում բավարար հիմքեր կային⁸³։

О СЮЖЕТНОЙ ОБЩНОСТИ ГЕРОИЧЕСКОГО ЭПОСА «ОДИССЕЯ» И НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СКАЗОК

Р. А. ГРИГОРЯН

Резюме

В армянском устном народном творчестве, в особенности в сказках, прослеживается устойчивая структурно-типологическая общность с греческими сказаниями о возвращении героев Троянской войны героического эпоса «Одиссея».

Композиционная линия этих сказаний и схожих с ними армянских сказок основана на возвращении героя из дальних скитаний домой, на родину, и описании тех приключений и препятствий, которые преодолеваются им на этом пути.

Сравнительный анализ сюжетов греческого фольклора и армянских сказок выявляет общее волшебномифологическое мышление этих народов, а также проливает свет на вопрос заимствования бродячих сюжетов, что является результатом тесных культурных взаимосвязей индоевропейских и малоазийских народов.

⁸⁹ Մ ս վ ս ս ն կ ր բ ն ա ջ դ , Հայոց պատմություն, Երևան, 1961, գլ. 10, էջ 136,
Մ. Արեգյան, Էջմ. աշխ., տե՛ս նաև Р. Григорян, Гомер и армянская литература
(автореферат канд. дисс.): Ереван,, 1963; Կ ո լ լ ե Ր՝ Гомер в оценке армянских
средневековых писателей (Международная конференция по средневековой литературе.
тезисы доклада, Ереван, 1986 с. 64).